«Ելնելով սոցիալիզմի քաղաքատնտեսության գիտության առարկայի սահմանումից, որ ես շարադրել եմ պլենար նիստում, սեկցիայում և ներկա նամակում, օգտագործելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդը, ես կարող եմ մեկ տարվա, ոչ ավելի մեկ ու կես տարվա ընթացքում, երկու մարդու օգնությամբ, մշակել սոցիալիզմի քաղաքատնտեսության հիմնական հարցերի թեորիական որոշումները, շարադրել սոցիալիզմի քաղաքատնտեսության մարքսիստական, լենինյան-ստալինյան թեորիան, մի թեորիա, որն այդ գիտությունը կդարձնի կոմունիզմի համար ժողովրդի պայքարի հատու գործիք»։

Չի կարելի շխոստովանել, որ ընկ. Յարոշենկոն համեստությամբ չի տառապում։ Դեռ ավելին, օգտվելով որոշ գրականագետների ոճից, կարելի է ասել «նույնիսկ բոլորովին ընդհակառակը»։

Վերևում արդեն ասվեց, որ ընկ. Յարոշենկոն սոցիալիզմի քաղաքատընտեսությունը շփոթում է ղեկավար օրգանների տնտեսական քաղաքականության հետ։ Այն, ինչ որ նա սոցիալիզմի քաղաքատնտեսության առարկա է համարում— արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումը, ժողովրդական տնտեսության պլանավորումը, հասարակական ֆոնդեր կազմելը և այլն— ոչ թե սոցիալիզմի քաղաքատնտեսության առարկան է, այլ ղեկավար օրգանների տնտեսական քաղաքականության առարկան։

Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ ընկ. Յարոշենկոյի թույլ տված լուրջ սխալները և նրա ոչ-մարքսիստական «տեսակետը» չեն տրամադրում, որ ընկ. Յարոշենկոյին այդպիսի մի հանձնարարություն տրվի։

* * *

Հետևություններ՝

1) Ընկ. Յարոշենկոյի գանգատը դիսկուսիայի ղեկավարների դեմ դուրկ է իմաստից, որովհետև դիսկուսիայի ղեկավարները, լինելով մարքսիստներ, չէին կարող իրենց ընդհանրացնող փաստաթղթերում արտացոլել ընկ. Յարոշենկոյի ոչ-մարքսիստական «տեսակետը».

2) Ընկ. Յարոշենկոյի խնդրանքը՝ իրեն հանձնարարել գրելու սոցիալիզմի քաղաքատնտեսությունը,— չի կարելի լուրջ համարել. թեկուզ հենց այն պատճառով, որ դրանից խլեստակովշչինայի հոտ է փչում։

Ի. ՍՏԱԼԻՆ

22 մայիսի 1952 թ.

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ Ա. Վ. ՍԱՆԻՆԱՅԻՆ ԵՎ Վ. Գ. ՎԵՆԺԵՐԻՆ

Ես ստացել եմ ձեր նամակները։ Ինչպես երևում է, այդ նամակների հեղինակները խորապես և լրջորեն ուսումնասիրում են մեր երկրի էկոնոմիկայի պրոբլեմները։ Նամակներում քիչ չեն ճիշտ ձևակերպումները և հետաքրքրական խորհրդածությունները։ Սակայն դրա հետ միասին այնտեղ կան նաև մի բանի լուրջ թեորիական սխալներ։ Ներկա պատասխանում ես մտադիր եմ կանգ առնել հատկապես այդ սխալների վրա։

1. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԸ

Ընկ. ընկ. Սանինան և Վենժերը պնդում են, թե «նյութական արտադրությամբ զբաղված սովետական մարդկանց գիտակցական ներգործության շնորհիվ են միայն առաջանում սոցիալիզմի տնտեսական օրենքները»։ Այդ դրույթը բոլորովին սխալ է։

Արդյոք տնտեսական զարգացման օրինաչափությունները գոյություն ունե՞ն օբեկտիվորեն, մեզանից դուրս, մարդկանց կամքից ու գիտակցությունից անկախ։ Մարքսիզմն այդ հարցին դրական պատասխան է տալիս։ Մարքսիզմը գտնում է, որ սոցիալիզմի քաղաքատնտեսության օրենքները մեզանից դուրս գոյություն ունեցող օբեկտիվ օրինաչափությունների արտացոլումն են մարդկանց գլխում։ Բայց ընկ. ընկ. Սանինայի և Վենժերի ֆորմուլան բացասական պատասխան է տալիս այդ հարցին։ Այդ նշանակում է, որ այդ ընկերները կանգնում են այն ոչ-ճիշտ թեորիայի տեսակետին, որը պնդում է, թե սոցիալիզմի ժամանակ տնտեսական զարգացման օրենքները «ստեղծվում են», «վերափոխվում են» հասարակության ղեկավար օրգանների կողմից։ Այլ կերպ ասած, նրանք խզում են կապերը մարքսիզմի հետ և կանգնում են սուբյեկտիվ իդեալիզմի ուղու վրա։

Մարդիկ, իհարկե, կարող են հայտնագործել այդ օբեկտիվ օրինաչափությունները, ճանաչել դրանք և, հենվելով դրանց վրա, օգտագործել դրանք հօգուտ հասարակության։ Բայց նրանք չեն կարող ո՛չ «ստեղծել», ո՛չ էլ «վերափոխել» դրանք։

Ենթադրենք, թե մենք մի րոպե կանգնեցինք այն ոչ-ճիշտ թեորիայի տեսակետի վրա, որը ժխտում է օբեկտիվ օրինաչափությունների գոյությունը տնտեսական կյանքում սոցիալիզմի ժամանակ և ապդարարում է տնտեսական օրենքներ «ստեղծելու», տնտեսական օրենքները «վերափոխելու» հնարավորությունը։ Ո՞ւր կհասցներ այդ։ Այդ կհասցներ այն բանին, որ մենք կընկնեինք քաոսի ու պատահականությունների թագավորությունը, մենք ստրկական կախման մեջ կընկնեինք այդ պատահականություններից, մենք մեզ կզրկեինք պատահականությունների այդ քաոսը ոչ միայն հասկանալու, այլև պարզապես այդ քաոսից դուրս հանելու հնարավորությունից։

Դա կհասցներ այն բանին, որ մենք կլիկվիդացնեինք քաղաքատնտեսությունը որպես գիտություն, որովհետև գիտությունը չի կարող ապրել ու զարգանալ առանց օբեկտիվ օրինաչափություններն ընդունելու, առանց այդ օրինաչափություններն ուսումնասիրելու։ Իսկ լիկվիդացնելով գիտությունը, մենք մեզ կզրկեինք երկրի տնտեսական կյանքում իրադարձությունների ընթացքը կանխատեսելու հնարավորությունից, այսինքն՝ մենք մեզ կզրկեինք թեկուզև ամենատարրական տնտեսական ղեկավարություն կազմակերպելու հնարավորությունից։

Վերջին հաշվով մենք կընկնեինք «տնտեսագիտական» ավանտյուրիստների կամայականության ճանկը, որոնք պատրաստ են «ոչնչացնելու» տնտեսական զարգացման օրենքները և «ստեղծելու» նոր օրենքներ, առանց հասկանալու և հաշվի առնելու օբեկտիվ օրինաչափությունները։

Բոլորին հայտնի է այս հարցում մարքսիստական դիրքի այն կլասիկ ձևակերպումը, որ տվել է Էնգելսը իր «Անտի-Դյուրինգ»-ում։

«Հասարակական ուժերը, բնության ուժերի նման, կուրորեն, բռնի ու քայքայիչ կերպով են գործում, քանի դեռ մենք չենք ճանաչել և հաշվի չենք առնում դրանք։ Բայց հենց որ մենք ճանաչեցինք այդ ուժերը, ուսումնասիրեցինք նրանց գործողությունը, ուղղությունն ու ազդեցությունը, այն ժամանակ միայն մեզանից է կախված նրանց ավելի ու ավելի մեր կամքին ենթարկելը և նրանց օգնությամբ մեր նպատակներին հասնելը։ Այս առանձնապես վերաբերում է արդի հզոր արտադրողական ուժերին։ Քանի դեռ մենք համառորեն հրաժարվում ենք նրանց էությունն ու բնույթը հասկանալուց,— իսկ այդ հասկանալուն դիմադրում են արտադրության կապիտալիստական եղանակն ու նրա պաշտպանները,— այնքան ժամանակ արտադրողական ուժերը հակառակ մեզ և մեր դեմ են գործում, այնքան ժամանակ նրանք իշխում են մեզ վրա, ինչպես այդ մանրամասնորեն ցույց է տրված վերևում։ Բայց հենց որ ըմբռնեցինք նրանց բնույթը, նրանք միավորված արտադրողների ձեռքում կարող են դիվային հրամայողներից հլու ծառաներ դառնալ։ Այստեղ տարբերությունը նույնն է, ինչ որ ամպրոպային կայծակի կործանարար ուժի և հեռագրաապարատի կամ աղեղնավոր լապաերում հնազանդորեն գործող էլեկտրականության միջև, նույն տարբերությունը, որ կա հրդեհի և մարդու ձեռքով կարգավորվող կրակի միջև։ Երբ արդի արտադրողական ուժերի հետ կսկսեն վարվել նրանց վերջապես ճանաչված բնույթի համեմատ, արտադրության մեջ իշխող հասարակական անարխիան կփոխարինվի արտադրության հանրային-պլանաչափ կարգավորմամբ, որը կալմակերպված կլինի այն հաշվով, որ բավարարի ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի պահանջները։ Այն ժամանակ յուրացման կապիտալիստական եղանակը, երբ արդյունքն ստրկացնում է նախ արտադրողին, իսկ հետո նաև յուրացնողին, իր տեղը կզիջի յուրացման նոր եղանակին, որը հիմնված կլինի արտադրության արդի միջոցների բուն բնույթի վրա, այն է՝ իր տեղը կզիջի, մի կողմից, արդյունքների հանրային անմիջական յուրացմանը՝ որպես արտադրությունը պահպանելու և ընդարձակելու միջոցների, իսկ մյուս կողմից նրանց՝ որպես գոյության ու վայելքի միջոցների անհատական անմիջական յուրացմանը»։

2. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ի՞նչ միջոցառումներ են անհրաժեշտ կոլտնտեսային սեփականությունը, որը, իհարկե, համաժողովրդական սեփականություն չէ, համաժողովրդական («ազգային») մակարդակին բարձրացնելու համար։

Որոշ ընկերներ կարծում են, թե անհրաժեշտ է պարզապես ազգայնացնել կոլտնտեսային սեփականությունը, այն հայտարարելով համաժողովրդական սեփականություն, օրինակ ունենալով այն, ինչ իր ժամանակին արվել է կապիտալիստական սեփականության հետ։ Այդ առաջարկությունը բոլորովին սխալ է և անպայման անընդունելի։ Կոլտնտեսային սեփականությունը սոցիալիստական սեփականություն է, և մենք ոչ մի դեպքում նրա հետ չենք կարող վարվել այնպես, ինչպես կապիտալիստական սեփականության հետ։ Այն հանգամանքից, որ կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սե-

փականություն չէ, ոչ մի դեպքում չի հետևում, թե կոլտնտեսային սեփականությունը սոցիալիստական սեփականություն չէ։

Այդ ընկերները կարծում են, թե առանձին անձերի և խմբերի սեփականությունը պետությանը որպես սեփականություն հանձնելը ազդայնացման միակ կամ համենայն դեպս լավագույն ձևն է։ Այդ ճիշտ չէ։ Պետությանը որպես սեփականություն հանձնելը իրականում ազդայնացման ոչ միակ և նույնիսկ ոչ լավագույն ձևն է, այլ ազգայնացման նախնական ձևն է, ինչպես այդ մասին ճիշտ ասում է Էնգելսը «Անտի-Դյուրինգ»-ում։ Անկասկած է, որ քանի դեռ գոյություն ունի պետությունը, պետությանը որպես սեփականություն հանձնելը ազդայնացման ամենից ավելի հասկանալի նախնական ձևն է։ Բայց պետությունը հավիտյան գոյություն չի ունենա։ Աշխարհի երկրների մեծ մասում սոցիալիզմի գործողության ոլորտի ընդլայնումով պետությունը կսկսի մահանալ և, իհարկե, այդ կապակցությամբ էլ կվերանա առանձին անձերի և խմբերի սեփականությունը պետությանը որպես սեփականություն հանձնելու հարցը։ Պետությունը կմահանա, իսկ հասարակությունը կմնա։ Հետևապես, որպես համաժողովրդական սեփականության ժառանգորդ հանդես կգա արդեն ոչ թե պետությունը, որը կմահանա, այլ ինքը հասարակությունը ի դեմս իր կենտրոնական, ղեկավար տնտեսական օրգանի։

Այս դեպքում ինչի՞ պետք է ձեռնարկել կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար։

Որպես կոլտնտեսային սեփականության այդպիսի բարձրացման հիմնական միջոցառում ընկ. ընկ. Սանինան և Վենժերը առաջարկում են՝ կոլտնտեսություններին որպես սեփականություն վաճառել արտադրության հիմնական գործիքները, որ կենտրոնացած են մեքենա-տրակտորային կայաններում, այդպիսով, պետությունը թեթևացնելով կապիտալ ներդրումներից գյուղատնտեսության մեջ և հասնել այն բանին, որ կոլտնտեսություններն իրենք պատասխանատվություն կրեն մեքենա-տրակտորային կայանների պահպանման ու զարգացման համար։ Նրանք ասում են.

«Ճիշտ չէր լինի կարծել, թե կոլտնտեսային ներդրումները պետք է գործադրվեն գլխավորապես կոլտնտեսային գյուղի կուլտուրայի կարիքների համար, իսկ գյուղատնտեսական արտադրության համար ներդրումների հիմնական մասսան առաջվա պես պետք է կատարի պետությունը։ Իսկ արդյոք ավելի ճիշտ չի՞ լինի պետությունն ազատել այդ բեռից, նկատի ունենալով այն, որ կոլտնտեսությունները լիապես ընդունակ են այդ բեռն ամբողջովին իրենց վրա վերցնելու։ Պետության համար քիչ գործ չի ճարվի իր միջոցները ներդնելու համար՝ երկրում սպառման առարկաների առատություն ստեղծելու նպատակներով»։

Այդ առաջարկությունը հիմնավորելու համար առաջարկության հեղինակները առաջ են քաշում մի քանի փաստարկ։

Առաջին։ Վկայակոչելով Ստալինի այն խոսքերը, որ արտադրության միջոցները չեն վաճառվում նույնիսկ կոլտնտեսություններին, առաջարկության հեղինակները կասկածի տակ են առնում Ստալինի այդ դրույթը, հայտարարելով, թե պետությունը, այնուամենայնիվ, կոլտնտեսություններին վաճառում է արտադրության միջոցներ, այնպիսի արտադրության միջոցներ, ինչպես մանր ինվենտարը, այն է՝ ղերանդիներ և մանգաղներ, փոքր շարժիչներ

և այլն։ Նրանք գտնում են, որ եթե պետությունը այդ արտադրության միջոցները վաճառում է կոլտնտեսություններին, ապա նա կարող է վաճառել նրանց արտադրության նաև մյուս բոլոր միջոցները՝ ՄՏԿ-ների մեքենաները։

Այդ փաստարկն անհիմն է։ Պետությունը, իհարկե, մանր ինվենտար է վաճառում կոլտնտեսություններին, ինչպես այդ սահմանված է Գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ և Կոնստիտուցիայով։ Բայց արդյոք կարելի է մի մակարդակի վրա դնել մանր ինվենտարը և գյուղատնտեսության մեջ արտադրության այնպիսի հիմնական միջոցներ, ինչպիսին են ՄՏԿ-ների մեքենաները, կամ, ասենք, հողը, որը չէ որ նույնպես արտադրության հիմնական միջոցներից մեկն է գյուղատնտեսության մեջ։ Պարզ է, որ չի կարելի։ Չի կարելի, որովհետև մանր ինվենտարը ոչ մի չափով չի վճռում կոլտնտեսային արտադրության բախտը, մինչդեռ արտադրության այնպիսի միջոցներ, ինչպիսին են ՄՏԿ-ների մեքենաները և հողը, ամբողջապես վճռում են գյուղատնտեսության բախտը մեր ժամանակակից պայմաններում։

Դժվար չէ հասկանալ, որ երբ Ստալինը խոսում էր այն մասին, թե արտադրության միջոցները չեն վաճառվում կոլտնտեսություններին, նա նկատի ուներ ոչ թե մանր ինվենտարը, այլ գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցները՝ ՄՏԿ-ների մեքենաները, հողը։ Հեղինակները խաղում են «արտադրության միջոցներ» բառերի հետ և շփոթում են երկու տարբեր բաներ, չնկատելով, որ իրենք անախորժ դրության մեջ են ընկնում։

Երկրորդ։ Ընկ. ընկ. Սանինան և Վենժերը այնուհետև հիշատակում են այն, որ մասսայական կոլտնտեսային շարժման սկսվելու ժամանակաշրջանում— 1929 թվականի վերջին և 1930 թվականի սկզբին Համկ(բ)Պ Կենտկոմը ինքն էր համաձայն, որ մեքենա-տրակտորային կայանները հանձնվեն կոլտնտեսություններին որպես սեփականություն, կոլտնտեսություններից պահանջելով մեքենա-տրակտորային կայանների արժեքը մարել նրանք տարվա ընթացքում։ Նրանք գտնում են, որ այն ժամանակ այդ գործը թեև տապալվեց կոլտնտեսությունների «ապքատության պատճառով», ապա այժմ, երբ կոլտնտեսությունները դարձել են հարուստ, կարելի է վերադառնալ այդ քաղաքականությանը— ՄՏԿ-ները կոլտնտեսություններին վաճառելուն։

Այդ փաստարկը նույնպես անհիմն է։ Համկ(բ)Պ Կենտկոմում իսկապես 1930 թվականի սկզբին որոշում էր ընդունվել ՄՏԿ-ները կոլտնտեսություններին վաճառելու մասին։ Այդ որոշումն ընդունվել էր մի խումբ հարվածային կոլտնտեսականների առաջարկությամբ՝ որպես փորձ, որպես նմուշ, նպատակ ունենալով մերձավոր ժամանակում վերադառնալ այդ հարցին և նորից քննարկել այն։ Սակայն հենց առաջին ստուգումը ցույց տվեց այդ որոշման անանպատակահարմար լինելը և մի քանի ամսից հետո, այն է՝ 1930 թվականի վերջում որոշումը վերացվեց։

Կոլտնտեսային շարժման հետագա վերելքը և կոլտնտեսային շինարարության զարգացումը վերջնականապես համոզեցին ինչպես կոլտնտեսականներին, այնպես էլ ղեկավար աշխատողներին, որ գյուղատնտեսական արտադրության հիմնական գործիքների կենտրոնացումը պետության ձեռքում, մեքենա-տրակտորային կայանների ձեռքում, կոլտնտեսային արտադրության աճման բարձր տեմպերի ապահովման միակ միջոցն է։

Մեզ բոլորիս ուրախացնում է մեր երկրի գյուղատնտեսական արտադրության վիթխարի աճումը հացահատիկի արտադրության, բամբակի, վուշի,

Հակնդեղի արտադրության աճումը և այլն։ Ո՞րն է այդ աճման աղբյուրը։ Այդ աճման աղբյուրը ժամանակակից տեխնիկան է, ժամանակակից բազմաթիվ մեքենաներն են, որոնք սպասարկում են արտադրության այդ բոլոր ճյուղերը։ Բանն այստեղ ոչ միայն տեխնիկան է առհասարակ, այլ այն, որ տեխնիկան չի կարող կանգնած մնալ մի տեղում, նա պետք է մշտապես կատարելագործվի, որ հին տեխնիկան պետք է հանվի շարքից և փոխարինվի նորով, իսկ նորը՝ նորագույնով։ Առանց դրան անհնարին է մեր սոցիալիստական հողագործության առաջընթացը, անհնարին է թե՛ մեծ բերքը, թե՛ գյուղատնտեսական մթերքների առատությունը։ Բայց ի՞նչ է նշանակում շարքից հանել հարյուր հազարավոր անիվավոր տրակտորներ և դրանք փոխարինել թրթուրավորներով, տասնյակ հազարավոր հնացած կոմբայնները փոխարինել նորերով, ստեղծել նոր մեքենաներ, ասենք, տեխնիկական կուլտուրաների համար։ Դա նշանակում է միլիարդների ծախսեր անել, որոնք միայն 6—8 տարուց հետո կարող են հատուցվել։ Արդյոք մեր կոլտնտեսությունները կարո՞ղ են այդպիսի ծախսեր անել, երբ նույնիսկ նրանք միլիոնատերեր են։ Ո՛չ, չեն կարող, որովհետև նրանք ի վիճակի չեն իրենց վրա վերցնելու այնպիսի միլիարդավոր ծախսեր, որոնք կարող են հատուցվել միայն 6—8 տարուց հետո։ Այդ ծախսերը իր վրա կարող է վերցնել միմիայն պետությունը, որովհետև նա և միայն նա է ի վիճակի իր վրա վերցնել հին մեքենաները շարքից հանելու և դրանք նորերով փոխարինելու վնասները, որովհետև նա և միայն նա է ի վիճակի 6—8 տարիների ընթացքում դիմանալ այդ վնասներին, որպեսզի այդ ժամկետը լրանալուց հետո փոխհատուցվեն կատարված ծախսերը։

Այս բոլորից հետո ի՞նչ է նշանակում պահանջել, որ ՄՏԿ-ները կոլտնտեսություններին վաճառվեն որպես սեփականություն։ Դա նշանակում է մեծ վնասների տակ գցել և քայքայել կոլտնտեսությունները, վիժեցնել գյուղատնտեսության մեքենայացումը, իջեցնել կոլտնտեսային արտադրության տեմպերը։

Այստեղից հետևություն՝ առաջարկելով ՄՏԿ-ները վաճառել կոլտնտեսություններին որպես սեփականություն, ընկ. ընկ. Սանինան և Վենժերը մի քայլ են անում դեպի հետամնացությունը և փորձում են ետ շրջել պատմության անիվը։

Ենթադրենք մի րոպե, թե մենք ընդունել ենք ընկ. ընկ. Սանինայի և Վենժերի առաջարկությունը և սկսել ենք արտադրության հիմնական միջոցները՝ մեքենա-տրակտորային կայանները վաճառել կոլտնտեսություններին որպես սեփականություն։ Ի՞նչ կստացվեր դրանից։

Դրանից կստացվեր, առաջին, այն, որ կոլտնտեսությունները կդառնային արտադրության հիմնական գործիքների սեփականատերեր, այսինքն՝ նրանք կրնկնեին մի այնպիսի բացառիկ դրության մեջ, որպիսին մեր երկրում չունի և ոչ մի ձեռնարկություն, որովհետև, ինչպես հայտնի է, մեզանում նույնիսկ ազդայնացված ձեռնարկությունները արտադրության գործիքների սեփականատերեր չեն։ Ինչո՞վ կարելի է հիմնավորել կոլտնտեսությունների այդ բացառիկ դրությունը, պրոդրեսիվ առաջընթացի ինչպիսի՞ նկատառումներով։ Արդյոք կարելի՞ է ասել, թե այդ դրությունը կնպաստեր կոլտնտեսային սեփականության բարձրացմանը համաժողովրդական սեփականության մակարդակին, թե այդ դրությունը կարագացներ մեր հասարակության անցումը սոցիալիզմից կոմունիզմին։ Ավելի ճիշտ չի՞ լինի ասել, որ այդպիսի դրությունը

միայն կարող էր կոլտնտեսային սեփականությունը հեռացնել համաժողովրդական սեփականությունից, և դա ոչ թե կմոտեցներ կոմունիզմին, այլ, ընդհակառակը, կհեռացներ նրանից։

Դրանից կստացվեր, երկրորդ, ապրանքային շրջանառության գործողության ոլորտի ընդլայնում, որովհետև գյուղատնտեսական արտադրության վիթխարի քանակով գործիքներ կընկնեին ապրանքային շրջանառության օրրիաի մեջ։ Ի՞նչ են կարծում ընկ. ընկ. Սանինան և Վենժերը, ապրանքային շրջանառության ոլորտի ընդլայնումը արդյոք կարո՞ղ է նպաստել մեր առաջխաղացմանը դեպի կոմունիզմ։ Արդյո՞ք ավելի ճիշտ չի լինի ասել, որ այդ ընդլայնումը կարող է միայն արգելակել մեր առաջխաղացումը դեպի կոմունիզմ։

Ընկ. ընկ. Սանինայի և Վենժերի հիմնական սխալն այն է, որ նրանք չեն հասկանում ապրանքային շրջանառության դերն ու նշանակությունը սոցիալիզմի ժամանակ, չեն հասկանում, որ ապրանքային շրջանառությունն անհամատեղելի է սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հեռանկարի հետ։ Նրանք, ըստ երևույթին, կարծում են, թե ապրանքային շրջանառության պայմաններում ևս կարելի է սոցիալիզմից անցնել կոմունիզմին, թե ապրանքային շրջանառությունը չի կարող խանգարել այդ գործին։ Դա խոր մոլորություն է, որ առաջացել է մարքսիզմը չհասկանալու բազայի վրա։

Քննադատելով Դյուրինգի՝ ապրանքային շրջանառության պայմաններում գործող «տնտեսական կոմունան», Էնգելսը իր «Անտի-Դյուրինգ»-ում համոզիչ կերպով ապացուցեց, որ ապրանքային շրջանառության առկայությունը Դյուրինգի այսպես կոչված «տնտեսական կոմունաներին» անխուսափելիորեն պետք է տանի դեպի կապիտալիզմի վերածնումը։ Ընկ. ընկ. Սանինան և Վենժերը, ըստ երևույթին, համաձայն չեն դրան։ Ավելի վատ իրենց համար։ Է՛հ, իսկ մենք՝ մարքսիստներս ելնում ենք այն հայտնի մարքսիստական դրույթից, որ սոցիալիզմից կոմունիզմին անցնելը և արդյունքները ըստ պահանջմունքների բաշխելու կոմունիստական սկզբունքը բացառում են ամեն մի ապրանքային փոխանակություն, հետևապես և արդյունքների փոխարկումը ապրանքների, դրա հետ միասին նաև դրանց փոխարկումը արժեքի։

Այսպես է ընկ. ընկ. Սանինայի և Վենժերի առաջարկության և փաստարկների բանը։

Վերջիվերջո ի՞նչ պետք է ձեռնարկել կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար։

Կոլտնտեսությունը մի արտասովոր ձեռնարկություն է։ Կոլտնտեսությունը աշխատում է հողի վրա և մշակում է հողը, որը վաղուց արդեն ոչ թե կոլտնտեսային, այլ համաժողովրդական սեփականություն է։ Հետևապես կոլտնտեսությունը իր մշակած հողի սեփականատերը չէ։

Այնուհետև։ Կոլտնտեսությունը աշխատում է ոչ թե կոլտնտեսային, այլ համաժողովրդական սեփականություն ներկայացնող արտադրության հիմնական գործիքների օգնությամբ։ Հետևապես, կոլտնտեսությունը արտադրության հիմնական գործիքների սեփականատերը չէ։

Այնուհետև։ Կոլտնտեսությունը կոոպերատիվ ձեռնարկություն է, նա օգտագործում է իր անդամների աշխատանքը և եկամուտները բաշխում է անդամների միջև ըստ աշխօրերի, ընդ որում կոլտնտեսությունն ունի իր սերմացուն, որն ամեն տարի նորոգվում է և գործադրվում։

Հարց է ծագում՝ կոլտնտեսությունը ի՞նչ ունի իրոք իր տրամադրության տակ, ո՞րն է այն կոլտնտեսային սեփականությունը, որը նա կարող է տնօրինել լիովին ազատ կերպով, սեփական հայեցողությամբ։ Այդպիսի սեփականություն է կոլտնտեսության արտադրանքը, կոլտնտեսային արտադրության արտադրանքը՝ հացահատիկը, միսը, յուղը, բանջարեղենը, բամբակը, ճակնդեղը, վուշը և այլն, չհաշված շինությունները և կոլտնտեսականների տնամերձ անձնական տնտեսությունները։ Բանն այն է, որ այդ արտադրանքի նշանակալի մասը, կոլտնտեսային արտադրության ավելցուկները մտնում են շուկա և այսպիսով ներառվում են ապրանքային շրջանառության սիստեմում։ Հենց այդ հանգամանքն է, որ այժմ խանգարում է կոլտնտեսային սեփականության բարձրացմանը համաժողովրդական սեփականության մակարդակին։ Ուստի հենց այս ծայրից էլ հարկավոր է ծավալել կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդականի մակարդակին բարձրացնելու աշխատանքը։

Կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար հարկավոր է կոլտնտեսային արտադրության ավելցուկները հանել ապրանքային շրջանառության սիստեմից և դրանք մտցնել պետական արդյունաբերության ու կոլտնտեսությունների միջև մթերափոխանակության սիստեմի մեջ։ Այս է հարցի էությունը։

Մեզանում դեռևս չկա մթերափոխանակության զարգացած սիստեմ, բայց կան մթերափոխանակության սաղմեր՝ գյուղատնտեսական մթերքների «ապրանքավորման» ձևով։ Ինչպես հայտնի է, բամբակագործական, վուշագործական, ճակնդեղագործական և այլ կոլտնտեսությունների արտադրանքը վաղուց արդեն «ապրանքավորվում է», ճիշտ է, «ապրանքավորվում է» ոչ-լրիվ, մասնակի չափով, բայց այնուամենայնիվ «ապրանքավորվում է»։ Ի միջի այլոց նկատենք, որ «ապրանքավորում» բառը անհաջող բառ է, պետք է այն փոխարինել մթերափոխանակությամբ։ Խնդիրն այն է, որ մթերափոխանակության այդ սաղմերը կազմակերպվեն գյուղատնտեսության բոլոր ճյուղերում և զարգանալով դառնան մթերափոխանակության լայն սիստեմ այն նպատակով, որ կոլտնտեսությունները իրենց արտադրանքի դիմաց ստանան ոչ միայն փող, այլև գլխավորապես անհրաժեշտ առարկաներ։ Այդպիսի սիստեմը կպահանջի հսկայական չափով ավելացնել քաղաքի կողմից գյուղին տրվող արտադրանքը, այդ իսկ պատճառով հարկ կլինի այդ սիստեմը կիրառության մեջ դնել առանց հատուկ շտապողականության, քաղաքի արտադրանքների կուտակման համեմատ։ Բայց այդ սիստեմը պետք է կիրառել անշեղորեն, առանց տատանումների, քայլ առ քայլ կրճատելով ապրանքային շրջանառության գործողության ոլորտը և ընդլայնելով մթերափոխանակության գործողության ոլորտը։

Այդպիսի սիստեմը, կրճատելով ապրանքային շրջանառության գործողության ոլորտը, կհեշտացնի անցումը սոցիալիզմից կոմունիզմին։ Բացի դրանից, նա հնարավորություն կտա կոլտնտեսությունների հիմնական սեփականությունը՝ կոլտնտեսային արտադրության արտադրանքը մտցնել համաժողովրդական պլանավորման ընդհանուր սիստեմի մեջ։

Հենց դա է կլինի կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու ռեալ ու վճռական միջոցը մեր ժամանակակից պայմաններում։

Արդյոք այդպիսի սիստեմը ձեռնտո՞ւ է մեր կոլտնտեսային գյուղացիությանը։ Անպայման ձեռնտու է։ Ձեռնտու է, որովհետև կոլտնտեսային գյու-

ղացիությունը պետությունից կստանա շատ ավելի արտադրանք և ավելի էժան գներով, քան ապրանքային շրջանառության դեպքում։ Բոլորին հայտնի է, որ այն կոլտնտեսությունները, որոնք կառավարության հետ մթերափոխանակության պայմանագրեր ունեն («ապրանքավորում»), անհամեմատ ավելի շատ օգուտ են ստանում, քան այդպիսի պայմանագրեր չունեցող կոլտնտեսությունները։ Եթե մթերափոխանակության սիստեմը երկրում տարածվի բոլոր կոլտնտեսությունների վրա, ապա այդ օգուտները կդառնան մեր ամբողջ կոլտնտեսային գյուղացիության սեփականություն։

Ի. ՍՏԱԼԻՆ

28 սեպտեմբերի 1952 թ.